«Հայաստանի Հանրապետություն», 17.07.2013 թ.

Մրցույթների տարի է

Երիտասարդների ներառումը՝ պարտադիր պայման

Թերահավատություն միշտ էլ եղել է: Միայն թե հիմա ինչ-որ չափով մեղմացել է: Խոսքը գիտության ոլորտում անցկացվող մրցույթների վերաբերյալ հասարակության որոշակի խմբերի վերաբերմունքի մասին է: Վերաբերմունքի, ինչ-որ իմաստով դրական փոփոխությունը ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանը պայմանավորում է անկախ փորձագիտական համակարգով: Երեկ հրավիրված ասուլիսի ժամանակ ասաց, որ այդ համակարգով Հայաստանը ԱՊՀ-ում առաջատար երկիր է համարվում: Կան պետություններ, որոնք այդ նախաձեռնությունն անգամ ուզում են գնել: Անկախ փորձագետների բազայի 1500 փորձագետ բավարարում է որոշակի չափանիշների: Նրանց մի մասը արտասահմանցի գիտնականներ են: Եվ այդ դեպքում գրեթե բացառվում է խնամի, ծանոթ կամ բարեկամ մեթոդի «կիրառումը»: Բանն այն է, որ մրցույթի ծրագրերն ուղարկվում են նաեւ նրանց: Փորձագետների դեմքը ոչ ոք չի տեսնում: Ամեն ինչ արվում է օն-լայն: Սամվել Հարությունյանի համոզմամբ՝ ծրագրերն արտասահման ուղարկելը մեծացնում է օբյեկտիվության աստիճանը. «Նախորդ մրցույթների ժամանակ որոշ փորձագետներ կարգը չեն պահպանել: Նրանց ազգանունները հանվել են փորձագիտական բազայից»: Ու, չնայած դրան, մրցույթները շարունակում են հաջող ընթանալ: Ավելին՝ դրանց թիվը աստիճանաբար աճում է:
Այսպես, ԳՊԿ-ն 2013թ. առաջին կիսամյակում հայտարարել է ներպետական եւ միջազգային 9 մրցույթ: Մինչեւ տարեվերջ նախատեսվում է եւս 2-ը: Ի դեպ՝ բոլոր մրցույթներում պարտադիր պայման է՝ խմբում ընդգրկել մինչեւ 35 տարեկան առնվազն մեկ գիտաշխատողի՝ կամ ասպիրանտի, կամ մագիստրոսի:
ԳՊԿ-ի նախագահը տեղեկացրեց նաեւ, որ ամփոփվել են 2011-2013թթ. գիտական եւ գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորմամբ իրականացված գիտական թեմաների հաշվետվությունները: Ծրագրերի ֆինանսավորմանը հատկացվել է 1.580.283.700 դրամ: «Ներկայումս գիտության կոմիտեն միաժամանակ հայտարարել է 4 մրցույթ՝ 3 միջազգային, եւ 1 ներպետական»,—ասաց Հարությունյանը՝ ընդգծելով, որ այդ մրցույթների թվում նաեւ ԼՂՀ կրթության եւ գիտության նախարարության հետ համատեղ իրականացվող մրցույթն է՝ «Արցախի գիտաշխատողների հետազոտությունների աջակցության ծրագիր-2013»-ը: Մրցույթի արդյունքում մինչեւ 2 տարի տեւողությամբ դրամաշնորհներ կտրամադրվեն 3-4 անձից բաղկացած գիտահետազոտական խմբերի: Դրանցում գիտական խորհրդատուն պետք է լինի ՀՀ մշտական բնակիչ: Խմբի մյուս անդամներն էլ պետք է լինեն ԼՂՀ մշտական բնակիչներ եւ դրամաշնորհի իրականացման ընթացքում բնակվեն այնտեղ:
Հուլիսի 13-ին էլ հայտարարվել է կիրառական արդյունքի ձեռքբերմանն ուղղված գիտական թեմաների հայտերի ընտրության մրցույթ: Մինչեւ 16 ամիս ժամկետով առավելագույնը 25

միլիոն դրամ կազմող դրամաշնորհները տրվելու են համաֆինանսավորման սկզբունքով՝ գիտության բոլոր բնագավառների մասնագիտություններով կիրառական արդյունքի ձեռքբերմանն ուղղված գիտական եւ գիտատեխնիկական հետազոտությունների իրականացման համար՝ 5-7 անձից բաղկացած հետազոտական խմբերի։ Ասուլիսի ժամանակ նշվեց, որ համաֆինանսավորող կարող է հանդիսանալ հայաստանյան կամ օտարերկրյա իրավաբանական անձը, որը կհամաֆինանսավորի նախագծի ընդհանուր արժեքի առնվազն 25%-ը։
Այսպիսով, ամփոփելով այս տարվա գիտական ծրագրերի մրցույթների առաջին կիսամյակը, Ս. Հարությունյանը 2013-ը հայտարարեց մրցույթների տարի։

Հայաստանի դիրքերը գիտության ոլորտում կփոփոխվեն

Տարբեր գնահատականներով «Քենդլը» 15 մլն եվրո արժողությամբ ծրագիր է։ ՀՀ -ի մասնաբաժինը մոտ 300 մլն դրամ է։ Մնացած գումարը սարքավորումների տեսքով ստացել ենք Գերմանիայից եւ Շվեյցարիայից։ «Կարելի է ասել՝ սա մեր գործընկերների կողմից նվեր է Հայաստանին։ Եվրաինտեգրման շրջանակներում գիտության ոլորտում նման համագործակցությունը կարելի է համարել օրինակելի։ Դա ցույց տվեց, որ մեր գիտնականները Եվրոպայում բարձր վարկանիշ ունեն, եւ մեզ հետ հաճույքով աշխատում են»,—վստահեցրեց ԳՊԿ-ի նախագահը։
Իսկ աշխատանքների հաջող ընթացքի դեպքում, Հարությունյանը կարծում է, որ մոտավորապես 3 տարի հետո կունենանք նոր արագացուցչային համալիր։ Եվ դա մեր տարածաշրջանում կլինի եզակի։ Իսկ Հայաստանը կհայտնվի այն պետությունների շարքում, որոնք աշխարհում հայտնի են որպես բարձր գիտական մակարդակ ունեցող երկրներ։
Բուն «Քենդլ» կենտրոնի շինարարական աշխատանքները նախատեսվում է սկսել 2013 թվականի վերջին՝ ՀՀ կառավարության կողմից համապատասխան հողհատկացումից հետո։

Թամարա Մուրադյան